Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-896-07.08.2024-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» 2015 թվականի մարտի 25-ի ՀՕ-16-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր՝ 3.1-ին կետ հետեւյալ բովանդակությամբ.

«3.1 Ռազմարդյունաբերության ոլորտում պետական լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, որն իրականացնում է սույն օրենքով, ինչպես նաեւ «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքի հավելվածի 16-րդ կետով սահմանված ռազմարդյունաբերության, ռազմարդյունաբերական համալիրի, սպառազինության եւ ռազմական տեխնիկայի զարգացման ապահովման, ռազմարդյունաբերական միջազգային համագործակցության իրականացման եւ զարգացման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 2-րդ կետի «ժ» ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«ժ. «ռազմական կարիքների համար հատուկ գիտահետազոտական եւ փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացման հայտերի ձեւավորման, ֆինանսավորման եւ կատարման կարգը»,

2) 2-րդ կետը լրացնել նոր՝ «ժե», «ժզ» եւ «ժէ» ենթակետերով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«ժե. «ռազմական կարիքների համար փորձանմուշների, լրամասերի եւ բաղադրիչների ֆինանսավորման կարգը»,

«ժզ. «ռազմական ապրանքի լրամասերի եւ բաղադրիչների ձեռքբերման ու պահուստավորման կարգը»,

«ժէ. Հայաստանի Հանրապետությունում ռազմական նշանակության ապրանքի, դրա լրամասերի, բաղադրիչների, փորձանմուշների, հատուկ գիտահետազոտական եւ փորձակոնստրուկտորական աշխատանքների արդյունքների պետական փորձարկումների անցկացման կարգը.»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 3-րդ կետի «ժա» ենթակետը շարադրել՝ հետեւյալ խմբագրությամբ.

«ժա. Հայաստանի Հանրապետությունում ռազմական նշանակության ապրանքի, դրա լրամասերի, բաղադրիչների, փորձանմուշների, հատուկ գիտահետազոտական եւ փորձակոնստրուկտորական աշխատանքների արդյունքների պետական փորձարկումների անցկացման կարգը»:

Հոդված 4. Օրենքը լրացնել նոր՝ «5.1»-րդ գլխով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 5.1

ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՈՒ ՓՈՐՁԱԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՓՈՐՁԱՆՄՈՒՇՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ, ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հոդված 14.1. Ռազմական կարիքների համար պետական պատվերի շրջանակներում ԳՀՓԿԱ աշխատանքների կատարումը, դրանց արդյունքների փորձարկումները

1. Ռազմական կարիքների համար պետական պատվերի շրջանակներում գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքներն (այսուհետ՝ ԳՀՓԿԱ) իրականացվում են համապատասխան աշխատանքների կատարման մասին կարգի հիման վրա:

2. Պետական (միջգերատեսչական) փորձարկումներ անցկացնող միջգերատեսչական փորձարկումների հանձնաժողովն իրականացնում է պայմանագրի փուլի աշխատանքների եւ փորձարկումների արդյունքների ընդունում: Հանձնաժողովը ձեւավորվում է պաշտպանության եւ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության բնագավառներում լիազորված պետական կառավարման մարմինների ղեկավարների կողմից ընդունված համատեղ հրամանով:

Հոդված 14.2. Ռազմական կարիքների համար պետական պատվերի շրջանակներում ԳՀՓԿԱ արդյունքների, փորձանմուշների հանձնման-ընդունման աշխատանքները

1. Ավարտված ԳՀՓԿԱ արդյունքներն ընդունվում են գնումների մասին օրենսդրության եւ համապատասխան աշխատանքների կատարման մասին կարգի հիման վրա:

2. Պետական պատվիրատուն ԳՀՓԿԱ արդյունքների իրագործումն ապահովելու նպատակով իր կողմից ընդունված պայմանագրի արդյունքները հանձնում է Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնին՝ ԳՀՓԿԱ նպատակներին համապատասխան օգտագործելու համար:

3.ԳՀՓԿԱ արդյունքների հանձնում-ընդունումն իրականացվում է որպես պետական պատվիրատու հանդես եկող պետական մարմնի եւ արդյունքն ընդունող պետական շահագրգիռ մարմնի ղեկավարների համատեղ հրամաններով:»:

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ վեցամսյա ժամկետում: